շրջանակում, պատկերներ, զարդեր։ Մատենադարան, № 1686, Հանրային գրադարան, № 901։

Ունի երկու անվանաթերթ, առաջինն սկսվում է. Երաժտական Երգեցմունք Հոգևորականք, *երկրորդը՝* Զայնքաղ Շարական, *վերջում՝* Յամի Մարգեղութեան Բանին 1794: Եւ ի Թուականին մերում՝ ՌՄԽԳ: Ի Տպարանի՝ տիրացու Յօհաննիսեան Պօղոսի:

16. ՏՕՄԱՐ։ Կ. Պոլիս, տպ. Պողոս Աստվածատր. (Արապյանի), 1795։ 445 զարդափակ էջ, պատկերներ, զարդեր։ Պատմության թանգարան, № 201։

Անվանաթերթն սկսվում է. Բուն տօմար Հայոց, և Հռոմայեցւոց: Պարզատօմար, և Տաղ Յովասափու, *վերջում՝* Տպեցաւ ի ՌՄԽԴ թուականիս մերում:

404 էջում հիշատակարան, ուր կարդում ենք. «Ի տպարանի Յօհաննիսեան Պօղոսի...», որ նույն Աստվածատրյան կամ Արապյան Պողոսն է։

17. ՍԱՂՄՈՍԱՐԱՆ։ Կ. Պոլիս, տպ. Պողոս Աստվածատր. (Արապյանի), 1797—1999 (՞)։ 35 էջ պատկերներ, զարդեր։ Մատենադարան, № 1327, Հանրային գրադարան, № 600։

Թե՛ Մատենադարանի և՛ թե Հանրային գրադարանի օրինակները պակասավոր են, չունեն տիտղոսաթերթ, ինչպես և սկզբի էջերը, Մատենադարանի օրինակի վերջը պահպանվել է, 356-րդ (չհամարակալված) էջում հիշատակարանն է, ուր ասված է. «յիշեսջիք ի մաքուր մաղթանս ձեր զԱրէպեան տիրացու յօհաննիսի որդի՝ զպօղոսս տպագրիչ», որից պարզվում է, որ Պոլսի Աստվածատրյան տպագրություն է։ Թիվը դրել ենք ենթադրաբար։ Հանրային գրադարանի գրացուցակում սխալմամբ համարվում է Աստրախանի տպագրություն։

Մատթեոս դպիր

18. ՍԱՂՄՈՍԱՐԱՆ։ Կ. Պոլիս, տպ. Մատթեոս դպիրի, 1798, 400 էջ, պատկերներ, զարդեր, անվանաթերթը պատկերազարդ շրջանակի մեջ։ Մատենադարան, № 1669։

Անվանաթերթ՝ Գիրք Սաղմոսաց. Տպեալ Հրամանաւ Տեառն Զաքարիայ ազգասէր և բարեկարգ Պատրիարգի: Ի կոստանդնուպօլիս: ի մայր դպրատան: Ի Մատթէոս դպրէ, իւրով իսկ Տպագրաւ:

400-րդ էջում հիշատակարան, ուր ասված է. «յաւարտ հասուցանել զտպումն սաղմոսարանիս։ Յամի տեառն 1798»։

Անհայտ տպարան

19. ՇԱՐԱԿՆՈՑ։ Կ. Պոլիս (՞), 1730, 782 էջ, պատկերներ, զարդեր, անվանաթերթը նկարազարդ շրջանակի մեջ։ Մատենադարան, № 1266։

Անվանաթերթ՝ Շարակնոց երաժշտական երգեցմունք եոգևորականք. աստուածայնոց և երջանկաց. սրբոց վարդապետաց. Հայոց թարգմանչաց զկարգաւորութիւնս եկեղեցւոյ վայելչացուցանողաց: տպագրեցաւ ի թւին նայոց ռճիթ. ապրիլի ի:

Մատենադարանի միակ օրինակը վերջից պակասավոր է (չկա 782 էջից հետո), հավանաբար ունեցել է հիշատակարան, որ պոկված է։ Տպագրական առանձնահատկություններից կարելի է ենթադրել, որ Կ. Պոլսի տպագրություն է։